# ՄԵԾԵՐԻՑ ՄԵԾԸ

## ԼՐԱՆՈՒՄ Է ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 145-ԱՄՅԱԿԸ



Հայ մեծ բանաստեղծ, արձակագիր, գրական-հասարակական գործիչ Հովհաննես Թադևոսի Թումանյանը ծնվել է 1869 թվականի փետրվարի 19-ին Լոռու Դսեղ գյուղում: Տարրական կրթությունն ստացել է ծննդավայրում, այնուհետև սովորել է Ջալալօղլու ծխական դպրոցում: 1883-ից բնակություն է հաստատել Թիֆլիսում, սովորել է Ներսիսյան դպրոցում, բայց լրիվ դասընթացը չավարտած աշխատանքի է անցել հայոց հոգևոր կոնսիստորիայում, ապա՝ Կովկասի հայոց հրատարակչական ընկերության գրասենյակում:

Հովհաննես Թումանյանը ստեղծագործել սկսել է 1880-ական թվականներից: Ժողովրդական մոտիվներով երգերից ու ավանդություններից բացի, գրել է հայրենասիրական բանաստեղծություններ՝ Ղևոնդ Ալիշանի և Ռափայել Պատկանյանի ակնհայտ ազդեցությամբ:

Որպես բանաստեղծ նա հայտնի դարձավ հաջորդ տասնամյակի սկզբին, երբ լույս տեսան նրա երկու ժողովածուները (1890, 1892 թվականներին): Այդ և հետագա տարիներին նա աշխատակցել է "Աղբյուր", "Մուրճ", "Հասկեր", "Հորիզոն" և այլ պարբերականների:

Թումանյանի մուտքը գրականություն համընկավ հայ մշակույթի շրջադարձային փուլերից մեկի հետ: Դարավերջին գրականության առաջնահերթ խնդիրն էր դարձել ժողովրդի կյանքի, սոցիալական և ազգային ձգտումների ճշմարտացի պատկերումը, ժողովրդական ստեղծագործության համակողմանի օգտագործումը: Դրա խոշորագույն կրողն ու մարմնավորողը եղավ Թումանյանը, որը հռչակեց "դեպի բնությունը, դեպի ժողովուրդը, հայոց գրողներ" սկզբունքը: Նա ճշմարիտ ժողովրդային էր համարում միայն այն գրականությունը, որի մեջ տեսնում էր "ազգային ոգի, վիշտ, ուրախություն, կզացմունք": Արդեն 1890-ական թվականներին հրատարակված Թումանյանի պոեմների, բանաստեղծությունների և բալլադների մեջ լայնորեն պատկերված են ժամանակի հայ իրականությանը բնորոշ սոցիալ-հոգեբանական կոնֆլիկտները:

Թումանյանի ստեղծագործական հասունության, ռեալիզմի և ժողովրդայնության ամենաբարձր փուլն սկսվում է 20-րդ դարի առաջին տարիներից: 1901-1903 թվականներին նա արմատապես վերամշակեց, փաստորեն նորից գրեց նահապետական հայ գյուղի կյանքը պատկերող "Անուշ", "Լոռեցի Սաքոն", "Մարոն" պոեմները: Դարասկզբին են հրատարակվել Թումանյանի էպիկական պոեզիայի մյուս նշանավոր երկերը՝ "Սասունցի Դավիթը", "Թմկաբերդի առումը", "Պոետն ու մուսան", "Դեպի անհունը", "Հին կռիվը" պոեմները, բազմաթիվ բալլադներ ու բանաստեղծություններ: Այդ երկերի մեծ մասը հավաքվեց 1903 թվականին Թիֆլիսում հրատարակված ժողովածուի մեջ, որը եղավ Թումանյանի դասական վարպետության առաջին ամբողջական արտահայտությունը:

Թումանյանի ստեղծագործական սկզբունքներն առավել ցայտուն արտահայտվել են նրա պոեմներում ու բալլադներում, որոնք այդ ժանրի մեջ հայ գրականության ամենաբարձր նվաճումներից են:

"Հառաչանք" պոեմում պատկերված են գյուղացիական մասսաների տարերային բողոքն ու պայքարը դասակարգային ճնշման դեմ, ժողովրդի՝ սոցիալական արդարության ու հավասարության երազանքը: Պոեմը մեզ հասել է անավարտ վիճակում, 1893-ին և 1914-ին մամուլում տպագրվել են դրա միայն երկու մասերը, մյուսները կորել են 1909 թ. ժանդարմական խուզարկության ժամանակ:

"Լոռեցի Սաքոն", "Մարոն" և, հատկապես, "Անուշ" պոեմներում նկարագրված է հայ նահապետական գյուղն իր սովորույթներով, պետկերացումներով, սոցիալ-կենցաղային հակասություններով: Միաժամանակ Թումանյանը ժողովրդական կյանքի տարերքում տեսնում է շատ բանաստեղծական ու գեղեցիկ բան՝ ազնվություն, անձնազոհություն, հոգու հարստություն, որոնք հակադրվում են աշխարհի հակահումանիստական բուրժուական սկզբունքներին: Այս ամենի մեջ դրսևորվել է Թումանյանի դեմոկրատիզմը:

"Անուշ" պոեմը հայ գրականության ամենասիրված երկերից է: Այդ պոեմի հիման վրա է ստեղծվել Արմեն Տիգրանյանի համանուն օպերան (1912): "Թմկաբերդի առումը" պոեմը գրական հիմք է ծառայել Ալեքսանդր Սպենդիարյանի "Ալմաստ" օպերայի համար (1920-ական թվականներ):

1894-ին Թումանյանը գրեց "Դեպի անհունը" պոեմը, որտեղ քննվում են կեցության հավերժական գաղտնիքները, կյանքի ու մահվան առեղծվածը:

Թումանյանը ժողովրդական բանահյուսությունը համարում էր "գրականության հարազատ հողն ու պատվանդանը" և համոզված էր, որ "ամեն մի ազգի բանաստեղծություն ժողովրդական լեգենդներով, ազգային ոգու ստեղծագործություններով է կորանում ու ինքնուրույնության կնիք առնում, հաստատվում, առաջ գալիս որպես մի ամբողջ ժողովրդի խոսք և դրանով էլ դառնում պատկառելի:

Հայկական էպոսի երրորդ՝ գլխավոր ճյուղի, մի քանի պատումների հիման վրա Հովհաննես Թումանյանն ստեղծեց "Սասունցի Դավիթը" (1902) պոեմը, որը մեր ժողովրդի հերոսական վիպերգության լավագույն մշակումն է:

Պատմական ավանդությունից է ներշնչված "Թմկաբերդի առումը" (1902) ազնվության ու նենգության, հայրենասիրության ու դավաճանության մասին պատմող էպիկական ասքը: "Հազարան բլբուլ" անավարտ հեքիաթպոեմում, որի վրա Թումանյանը ընդհատումներով աշխատել է 1890-ական թվականների կեսերից մինչև իր մահը, դրված է մարդու և հասարակության կատարելագործման մեջ արվեստի վիթխարի դերի փիլիսոփայական-գեղագիտական խնդիրը: Թումանյանը հայ գրականության մեջ հաստատեց բանահյուսության օգտագործման ռեալիստական սկզբունքը, որը ժողովրդական սկզբնաղբյուրի ոգուն հավատարմությունը վուգակցում է բանաստեղծի ակտիվության, նրա մարդասիրական գաղափարների դրսևորման հետ: Այդ ճանապարհով են կերտվել նաև Թումանյանի բալլադները, որոնց հիմքում ընկած են լեգենդներ և ավանդույթներ: Այս ժանրի առավել նշանակալից երկերն են "Ախթամար" (1892), "Փարվանա" (1903), "Հսկան" (1908), "Աղավնու վանքը" (1913), "Թագավորն ու չարչին" (1917) լեգենդները:

Քսաներորդ դարի սկզբին Թումանյանը մշակեց ավելի քան երկու տասնյակ հայկական ժողովրդական հեքիաթներ ("Տերն ու ծառան", "Ոսկու կարասը", "Քաջ Նազար"):

Հայ գրականության արձակի լավագույն էջերից են Թումանյանի պատմվածքները, որոնք նվիրված են գերազանցապես հայ գյուղի կյանքին, կենցաղին, բնությանը: Դրանք ստեղծում են լիարյուն գեղարվեստական կերպարներ, ճշգրիտ և դիպուկ են մանրամասների, խորիմաստ և նշանակալից՝ գեղարվեստական ընդհանրացումների մեջ: Հայ արձակի գլուխգործոց է "Գիքորը" (1895)՝ բուրժուական քաղաքում կոհված գյուղացի պատանու պատմությունը, որը բազմիցս բեմականացվել է, հիմք դարձել լիամետրաժ կինոնկարի համար:

Մանկական գրականության լավագույն էջերից են "Շունն ու կատուն", "Անբախտ վաճառականներ", այլ չափածո ու արձակ գործեր:

Թումանյանը ակտիվ մասնակցություն է ունեցել դպրոցական "Լուսաբեր" դասագրքի և "Հայ գրողներ" երկհատոր քրեստոմատիայի ստեղծմանը:

Կյանքի վերջին տարիներին (1916-1922) Թումանյանն ստեղծեց բազմաթիվ քառյակներ: Մտքի ու խոսքի կատարյալ ներդաշնակությամբ, բացառիկ հակիրճությամբ բնութագրվող այդ գործերը շոշափում են մարդու կոչման, կյանքի և մահվան փոխհարաբերության բարդ հարցերը, դրանք լուծում մարդասիրական ու բնապաշտական դիրքերից:

Հովհաննես Թումանյանը 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների հայ գրականության կենտրոնական դեմքն է: Նա եղել է գրական-հասարակական կազմակերպությունների հիմնադիր ու ղեկավար: 1899-ին նրա նախաձեռնությամբ ստեղծվել է "Վերնատուն" գրական խմբակը, որի մեջ մտնում էին Ղազարոս Աղայանը, Ավետիք Իսահակյանը, Լևոն Շանթը, Դերենիկ Դեմիրճյանը և ուրիշներ: 1912-ին Թումանյանը ընտրվել է նոր կազմակերպված Հայ գրողների ընկերության նախագահ, վիթխարի գործ կատարել հայ գրականության լավագույն ուժերի համախմբման, առաջավոր գեղագիտական սկզբունքների պրոպագանդման համար:

Հրապարակախոսական ելույթներում Թումանյանը մշտապես հանդես է եկել իբրև հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ջատագով՝ պաշտպանելով Ռուսաստանի հետ դաշինքի ու եղբայրական համագործակցության գաղափարը:

Նշանակալի է Թումանյանի թարգմանական աշխատանքը: Նա թարգմանել է Պուշկինի, Լերմոնտովի, Շեքսպիրի, Բայրոնի և ուրիշների գործերը: Թումանյանի շատ երկեր թարգմանվել են ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, իսպաներեն, արաբերեն, հունարեն, ճապոներեն, չինարեն, պարսկերեն և այլ լեզուներով:

Թումանյանի ստեղծագործության սոցիալական ու գեղարվեստական նշանակությունը շատ բարձր է գնահատվել: Իսկ ռուս ականավոր բանաստեղծ և գիտնական Վալերի Բրյուսովը 1916-ին գրել է. "Ամբողջովին վերցրած՝ Թումանյանի պոեզիան Հայաստանն ինքն է՝ հնադարյան և նոր, հարություն առած և բանաստեղծությամբ արտահայտված՝ մեծ վարպետի ձեռքով":

Հովհաննես Թումանյանը վախճանվել է 1923 թ. մարտի 23-ին, 54 տարեկան հասակում, Մոսկվայում: Թաղված է Թբիլիսիի հայկական պանթեոնում: Թումանյանի տուն-թանգարաններ կան Երևանում և Դսեղում, նրա անունով են կոչվում հրապարակ Մոսկվայում, ջերմանավ, Երևանի տիկնիկային թատրոնը, գրադարաններ, դպրոցներ, փողոցներ: